# Արձանագրություն 1

2021 թ. սեպտեմբերի 07-ին <<Կրթություն ԿՈՌՈՒ>>ՍՊԸ դպրոցի ծնողական խորհրդի առաջին նիստը:

Նիստին մասնակցեցին բոլոր դասարանների (թվով 13 դասարան) ծնողական կոմիտեների նախագահները, դպրոցի տնօրեն Տաթևիկ Կոստանյանը ու Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Աննա Աղանյանը:

Օրակարգում՝

1) 2021-2022 ուսումնական տարվա սկզբի հետ կապված տնօրենի ողջույնի խոսքը:
2) 2021-2022 ուսումնական տարվա ծնողական խորհրդի նախագահի ընտրություն:
3) 2021-2022 ուսումնական տարվա ծնողական խորհրդի կազմի ընտրություն:
4) 2021-2022 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանի ,ներքին գնահատման ,ներքին կարգապահական կանոնների ծանուցում:
5) Ծնողազուրկ և սոցիալապես անապահով սովորողներին աջակցելու մասին:
6) Դպրոցում սովորողների իրավունքների պաշտպանության ապահովման մասին:
7) Ուսումնական հաստատության դժվար դաստիարակվող սովորողների դաստիարակչական աշխատանքներ տանելու հարցը:

1) 2021-2022 ուսումնական տարվա սկզբի հետ կապված տնօրենի ողջույնի խոսքը:

**Լսեցին:** <<Կրթություն ԿՈՌՈՒ>>ՍՊԸ դպրոցի տնօրեն Տաթևիկ Կոստանյանը ողջունեց ծնողներին և շնորհավորեց նոր ուսումնական տարվա սկզբի կապակցությամբ: Ներկայացրեց տարվա անելիքները: Ներկաներին տեղեկացրեց, որ 4-րդ և 9-րդ և դասարանների աշակերտները գրելու են տնօրենության կողմից գրավոր աշխատանքներ, որոնք տրվում են ուսման որակը և աշակերտների առաջադիմությունը բարձրացնելու համար:

**Որոշեցին:** Տնօրենի ուղերձն ու դիտարկումներն ընդունել ի գիտություն:

2) 2021-2022 ուսումնական տարվա ծնողական խորհրդի նախագահի ընտրություն:

**Լսեցին:** Ծնողական խորհրդի անդամների քվեարկությանն է ներկայացվում 2021-2022 ուսումնական տարվա ծնողական խորհրդի նախագահի թեկնածուները և փակ քվերկության միջոցով ընտրվում է նախագահը:

**Որոշեցին:**

- Ծնողական խորհրդի նախագահի առաջադրված թեկնածուին՝
  Մանե Գալստյանը

Վանյան Լաուրա

- Հաստատել հաշվիչ հանձնաժողովի կազմը՝
  1) Բաղդասարյան Մարիամ
  2) Աբրահամյան Սուսաննա
  3) Մելքոնյան Լիլիթ
- Հաշվիչ հանձնաժողովի հրապարակած տվյալների հիման վրա ամփոփվեց հաստատության ծնողական խորհրդի նախագահի ընտրության հետևյալ արդյունքները.
  - ✓ Քվեարկության մասնակիցների թիվը՝ 24 (քսանչորս)
  - ✓ Հաստատված քվեաթերթիկների թիվը՝ 24 (քսանչորս)
  - ✓ Օգտագործված քվեաթերթիկների թիվը՝ 24 (քսանչորս)
  - ✓ Անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 0 (զրո)
  - ✓ Չօգտագործված քվեաթերթիկների թիվը՝ 0 (զրո)
  - ✓ Քվեարկության արդյունքները՝

Մանե Գալստյան կողմ՝ 20

Վանյան Լաուրա կողմ՝ 4

Կայացրած արդյունքների հիման վրա մեկ ուսումնական տարի լիազորության ժամկետով հաստատության ծնողական խորհրդի նախագահ ընտրել Մանե Գալստյանն:

Ընտրվեց նաև Ծնողական խորհրդի նիստերի քարտուղարը՝ Լաուրա Վանյանը:

3) 2021-2022 ուսումնական տարվա ծնողական խորհրդի կազմի ընտրություն:

**Լսեցին:** Ծնողական խորհրդի նախագահ Մանե Գալստյանը հրապարակում է ծնողական խորհրդի կազմը:

**Որոշեցին:** Հաստատել Ծնողական խորհրդի հետևյալ կազմը՝

| Հ/Հ | Անուն ազգանուն | Դասարան |
|---|---|---|
| 1 | Շահբազյան Սյուզի | 1 |
| 2 | Ավդալյան Լուսինե | |
| 3 | Բաղդասարյան Լուսինե | 2ա |
| 4 | Բաբուջյան Մերի | |
| 5 | Գալստյան Աննա | 2բ |
| 6 | Վարդազարյան Սիրան | |
| 7 | Թումանյան Սոնա | 2գ |
| 8 | Բաղդասարյան Մարիամ | |
| 9 | Մաթևոսյան Վիկտորիա | 3ա |
| 10 | Հարությունյան Նունե | |

| | | |
|---|---|---|
| 11 | Հովակիմյան Քրիստինե | 3բ |
| 12 | Բաբիկյան Սյուզաննա | |
| 13 | Ավետիսյան Անուշ | 4 |
| 14 | Խալաթյան Լիլիթ | |
| 15 | Վանյան Լուսինե | 5 |
| 16 | Պետրոսյան Մարիամ | |
| 17 | Մելքոնյան Լիլիթ | 6 |
| 18 | Աբրահամյան Սուսաննա | |
| 19 | Հովհաննիսյան Իրինա | 7 |
| 20 | Աղվանյան Արմինե | |
| 21 | Աթաջյան Լիոնի | 8 |
| 22 | Հովակիմյան Քրիստինե | 9 |
| 23 | Կոստանյան Տաթևիկ | |
| 24 | Զաքարյան Լուսինե | 10 |
| 25 | | |

4) 2021-2022 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանի, ներքին գնահատման և ներքին կարգապահական կանոնների ծանուցում:

**Լսեցին:**<<Կրթություն ԿՈՌՈՒ>>ՍՊԸ դպրոցի տնօրեն Նարինե Մալախյանը ներկայացրեց 2021-2022 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանը ,ներքին գնահատման,ներքին կարգապահական կանոնները:

**Որոշեցին:** Ընդունել ի գիտություն:

5) Ծնողազուրկ և սոցիալապես անապահով սովորողներին աջակցելու մասին:

**Լսեցին:** Ծնողական խորհրդի նախագահ Քրիստինե Հովակիմյանը առաջարկում է դասարանների ղեկավարների հետ ստեղծել ծնողազուրկ և սոցիալապես անապահով աշակերտների ցուցակ և դիմել տնօրենությանը և/կամ սեփական ուժերով օժանդակել վերոնշյալ սովորողներին դասագրքերով ապահովելու հարցը լուծելու համար:

**Որոշեցին:** Դիմել տնօրենությանը և/կամ սեփական ուժերով կարգավորել ծնողազուրկ և սոցիալապես անապահով սովորողների դասագրքերով ապահովվելու հարցը:

6) Դպրոցում սովորողների իրավունքների պաշտպանության ապահովման մասին:

**Լսեցին:** Դպրոցի Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Աննա Աղանյանը ներկաներին ծանոթացրեց դպրոցի ներքին կարգապահական կանոններին, որոնց մեջ ներառված են սովորողի, դպրոցի և ծնողի իրավունքներն ու պարտականությունները: Հորդորեց ծնողներին

վերահսկողություն իրականացնել աշակերտների հագուկապի և հիգիենայի կանոնների պահպանման ուղղությամբ և վերհսկել դպրոցբերվող պարագաները:

**Որոշեցին:** Ընդունել ի գիտություն:

**Լսեցին:** Ծնողական խորհրդի նախագահ Մանե Գալստյանը առաջարկեց աշակերտական խորհրդի հետ համատեղ կազմակերպել սեմինար պարապմունքներ սովորողներին իրենց իրավուքներն ու պարտականությունները, ՀՀ օրենսդրությանը ծանոթացնելու նպատակով:

**Որոշեցին:** Աշակերտական խորհրդի հետ կազմակերպել առաջարկված միջոցառումները:

7) Ուսումնական հաստատության դժվար դաստիարակվող սովորողների դաստիարակչական աշխատանքներ տանելու հարցը:

**Լսեցին:** Դպրոցի դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչը նարկայացրեց,որ ուսումնական հաստատությունում դժվար դաստիարակվող աշակերտներ չկան: Լինում են կարգապահական խնդիրներ, բայց դրանք շատ արագ հարթվում են դպրոցի անձնակազմի ջանքերով:

**Որոշեցին:** Դպրոցում դժվար դաստիարակվող աճակերտներ լինելու դեպքում հաջորդ նիստին կքննարկվի հարցը:

Ծնողական խորհրդի նախագահ՝ /Մ.Գալստյան/

Քարտուղար՝ /Լ.Ավդալյան/

# Արձանագրություն 1

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԿՈՌՈՒ» «КРТУТЮН КОРУ» «KRTUTYUN KORU» 02652916

ՀՀ.09.2022թ. հրավիրվեց <<Կրթություն ԿՈՌՈՒ >> ՍՊԸ դպրոցի ծնողական խորհրդի թիվ 1 նիստը:

Նիստին մասնակցեցին թվով 14 դասարանների ծնողական խորհուրդները, դպրոցի տնօրեն Ն. Մալախյանը և ԴԱԿ Ք. Տեր –Մինասյանը:

ՕՐԱԿԱՐԳ - 1. 2022-2023 ուստարվա դպրոցի ծնողական խորհրդի ընտրության հարցը:

2. <<Կրթություն ԿՈՌՈՒ >> ՍՊԸ դպրոցի 2022-2023 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքային պլանի ներկայացում, ներքին գնահատման և ներքին կարգապահական կանոնների ծանոթացում:

Նիստին մասնակցում էին դպրոցի թվով ներքոհիշյալ 27 ծնող , որոնք առաջադրվել են 2022-2023 ուստարվա 1-ին ծնողական ժողովների արդյունքում , որպես ծնողական խորհրդի անդամներ:

| Հ/Հ | Անուն, Ազգանուն | | Դասարան |
|---|---|---|---|
| 1. | Էլինա | Չախոյան | 1ա |
| 2. | Գեղեցիկ | Գևորգյան | 1ա |
| 3. | Մարիամ | Համազասպյան | 1բ |
| 4. | Իզաբելլա | Պողոսյան | 1բ |
| 5. | Լաուրա | Վանյան | 2ա |
| 6. | Քրիստինե | Գրիգորյան | 2ա |
| 7. | Արմինե | Մուրադյան | 2բ |
| 8. | Հռիփսիմե | Մեհրաբյան | 2բ |
| 9. | Սոնա | Մոմջյան | 2գ |
| 10. | Արմինե | Բաղալյան | 2գ |
| 11. | Սյուզի | Շահբազյան | 3 |
| 12. | Լուսինե | Ավդալյան | 3 |
| 13. | Լուսինե | Բաղդասարյան | 4ա |
| 14. | Մերի | Բաբուջյան | 4ա |
| 15. | Աննա | Գալստյան | 4բ |
| 16. | Միրան | Վարդազարյան | 4բ |
| 17. | Սոնա | Թումանյան | 4գ |
| 18. | Մարիամ | Բաղդասարյան | 4գ |
| 19. | Վիկտորիա | Մաթևոսյան | 5 |

| | | | |
|---|---|---|---|
| 20. | Սյուզաննա | Բաբիկյան | 5 |
| 21. | Անուշ | Ավետիսյան | 6 |
| 22. | Լիլիթ | Խալաթյան | 6 |
| 23. | Լուսինե | Վանյան | 7 |
| 24. | Մանե | Գալստյան | 7 |
| 25. | Սուսաննա | Աբրահամյան | 8 |
| 26. | Լիլիթ | Մելքոնյան | 8 |
| 27. | Իրինա | Հովհաննիսյան | 9 |

ԼՍԵՑԻՆ – 2022-2023 ուստարվա դպրոցի ծնողական խորհդի նախագահի ընտրության հարցը:

Ծնողներ՝ Լ. Մելքոնյանը, Ս. Աբրահամյանը ,Ա. Գալստյանը, Ա. Ավետիսյանը և այլ ծնողներ առաջարկեցին Մ Գալստյանի թեկնածությունը՝ հիմնավորելով նրա բարեխիղճ, նվիրված կազմակերպված աշխատանքը : Նրանք նշեցին , որ նախորդ տարիների Մ. Գալստյանն է եղել ծնող խորհրդի նախագահը և , որ բոլորը շատ գոհ են նրա կազմակերպչական ունակություններից: Առարկություն չեղավ և քանի որ մեկ թեկնածություն էր կատարվեց/փակ/ քվեարկություն , որի արդյունքում 27 կողմ ձայնով Մ. Գալստյանը ընտրվեց ծնողական խորհրդի նախագահ 1/մեկ/ տարի ժամկետով: Ծնողական նիստերի քարտուղար ընտրվեց Լ. Մելքոնյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Կայացրած արդյունքների հիման վրա 1/մեկ/ ուսումնական տարի լիազորության ժամկետով հաստատության ծնողական խորհրդի նախագահ ընտրել Մ. Գալստյանին: Ծնողական խորհրդի նիստերի քարտուղար Լ. Մելքոնյան

2.

ԼՍԵՑԻՆ – << Կրթություն ԿՈՌՈՒ >> ՍՊԸ տնօրեն Լ. Մալախյանը դպրոցի ծնողական խորհրդին ներկայացրեց 2022-2023 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանը , նշելով , որ ուսումնական տարվա ընթացքում առաջնորդվելու են ներկայացված ուսումնադաստիրակաչական աշխատանքների պլանով, եթե ծնողների կողմից կլինեն այլ առաջարկություններ կամ լրացումներ , դրանք տեղ կգտնեն

աշխատանքային պլանի հավելված բաժնում և ներքին գնահատման ու ներքին կարգապահական կանոնների ծանոթացում:

ՈՐՈՇԵՑԻՆ – 2022-2023 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանի ծանոթացումը և ներքին գնահատման ու ներքին կարգապահական կանոնների ծանոթացումը ընդունել ի գիտություն:

Ծնողական խորհրդի նախագահ՝ / Մ. Գալստյան/

Քարտուղար՝ / Լ. Մելքոնյան/

# Արձանագրություն 2

2022 թ. հունվարի 14-ին <<Կրթություն ԿՈՌՈՒ>>ՍՊԸ դպրոցի ծնողական խորհրդի առաջին նիստը:

Նիստին մասնակցեցին բոլոր դասարանների (թվով 13 դասարան) ծնողական կոմիտեների նախագահները, դպրոցի տնօրեն Նարինե Մալախյանը ու Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Աննա Աղանյանը:

Օրակարգում՝

1) 2021-2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ամփոփում:
2) Սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում ծնողների մասնակցության ապահովման մասին:
3) Ծնողներին տեղեկատվությամբ ապահովում:
4) Դպրոցական արձակուրդների ժամանակ սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպում:
5) Ուսումնական հաստատությունում սովորողների հիմնական պարտադիր կրթություն իրականացնելու գործընթացի մասին:
6) Սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքների կազմակերպում:
7) Ուսումնական հաստատության դժվար դաստիարակվող սովորողների դաստիարակչական աշխատանքներ տանելու հարցը:
8) Ընթացիկ հարցեր:

1) 2021-2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ամփոփում:

**Լսեցին:** Ծնողական խորհրդի նախագահը ամփոփեց առաջին կիսամյակի արդյունքները: Խոսեց աշակերտների հաճախումներից, ասաջադիմությունից, անցկացված տնօրենության գրավոր աշխատանքներից և դրանց արդյունքներից:

**Որոշեցին:** Ընդունել ի գիտություն

2) Սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում ծնողների մասնակցության ապահովման մասին: :

**Լսեցին:** Ծնողական խորհրդի նախագահ Մանե Գալստյանը առաջարկեց սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքները ավելի հետաքրքրաշարժ դարձնեն իրականացնել նպատակային այցելություններ: Օրինակ՝ աշակերտների համար կարելի է կազմակերպել նկարչական օր բնության գրկում:

**Որոշեցին:** Հաստատության փորձառու մասնագետների և աշակերտական խորհրդի հետ համագործակցելով կազմակերպել սովորողների արտադպրոցական աշխատանքները՝ ելնելով վերջիններիս նախասիրություններից և հաշվի առնելով սովորողի ստեղծագործական և գեղագիտական ընդունակությունները:

3) Ծնողներին տեղեկատվությամբ ապահովում:

**Լսեցին:** Ծնողական խորհրդի նախագահը հանձնարարեց դասարանական ծնողական կոմիտեների նախագահներին պարբերաբար տեղեկատվություն տրամադրել դասարանների մյուս ծնողներին աշակերտների բացակայությունների և առաջադիմության վերաբերյալ:

**Որոշեցին:** Սովորողների առաջադիմության, ուսումնական դասընթացներին հաճախումների վերաբերյալ ծնողներին համապատասխան տեղեկատվությամբ ապահովելու համար հանձնարարել դասարանական ծնողական խորհուրդների նախագահներին դասարանների ղեկավարների հետ համագործակցելով սահմանված կարգով հրավիրել ծնողական ժողովներ և ծնողներին ներկայացնել աշակերտների հաճախումներն ու առաջադիմությունը:

4) Դպրոցական արձակուրդների ժամանակ սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպում:

**Լսեցին:** Ծնողական խորհրդի նախագահ Մանե Գալստյանը առաջարկեց սովորողների հանգիստն ու ժամանցը կազմակերպելու համար իրականացնել այցելություններ մշակութային կառույցներ, ինչպես նաև կազմակերպել հանդիպումներ մշակութային գործիչների հետ:

**Որոշեցին:** Տնօրենության, դասարանների ղեկավարների, ԴԱԿ-ի և աշակերտական խորհրդի հետ համատեղ կազմակերպել մշակութային հանդիպումներ, ինչպես նաև պարբերական այցելություններ թատրոններ, պատկերասրահներ և թանգարաններ, ինչպես նաև ճանաչողական էքսկուրսիաներ ՀՀ տարածքով:

5) Ուսումնական հաստատությունում սովորողների հիմնական պարտադիր կրթություն իրականացնելու գործընթացի մասին:

**Լսեցին:** ԴԱԿ Աննա Աղանյանը արձանագրեց, որ դպրոցում կան աշակերտներ, ովքեր պարբերաբար և անհարկի բացակայում կամ ուշանում են դասերից, անտարբեր են կրթության հանդեպ:

**Որոշեցին:** Հաստատության փորձառու ուսուցիչների, դասարանական ծնողական և աշակերտական խորհուրդների հետ համատեղ կազմակերպել սովորողների հաճախումների հաշվառման և ուսումնառության ընթացքում անհարկի

բացակայած աշակերտների հետ տարվող աշխատանքների պլան-ծրագիր և արդյունաները ներկայացնել ու ամփոփել դասարանական ծնողական ժողովների ժամանակ:

6) Դպրոցում սովորողների իրավունքների պաշտպանության ապահովման մասին:

**Լսեցին:** Ծնողական խորհրդի նախագահ Մանե Գալստյանը առաջարկեց աշակերտական խորհրդի հետ համատեղ կազմակերպել սեմինար պարապմունքներ սովորողներին իրենց իրավուքներն ու պարտականությունները, ՀՀ օրենսդրությանը ծանոթացնելու նպատակով:

**Որոշեցին:** Աշակերտական խորհրդի հետ կազմակերպել առաջարկված միջոցառումները: Խնդրել տնօրենին գործող օրենսդրությանը համապատասխան պայմաններ ստեղծել սովորողների իրավական գիտելիքների ուսուցանման և զարգացման համար կազմակերպել ուսուցողական խորհրդատվական հանդիպումներ իրավաբան մասնագետի հետ:

7) Ուսումնական հաստատության դժվար դաստիարակվող սովորողների դաստիարակչական աշխատանքներ տանելու հարցը:

Լսեցին: Դպրոցի դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչը նարկայացրեց,որ ուսումնական հաստատությունում դժվար դաստիարակվող աշակերտներ չկան: Լինում են կարգապահական խնդիրներ, բայց դրանք շատ արագ հարթվում են դպրոցի անձնակազմի ջանքերով:

Որոշեցին: Դպրոցում դժվար դաստիարակվող աշակերտներ լինելու դեպքում հաջորդ նիստին կքննարկվի հարցը:

8) Ընթացիկ հարցեր:

**Լսեցին:** Ծնողական խորհրդի նախագահ Մանե Գալստյանը ներկայացրեց նաև երկրորդ կիսամյակի կատարվելիք աշխատանքները՝ անդրադառնալով պետական-ավարտական և փոխադրական քննություններին, ինչպես նաև <<Վերջին դաս>> միջոցառման կազմակերպմանը:

**Որոշեցին:** Անհրաժեշտության դեպքում աջակցել վերոնշյալ գործընթացների իրականացմանը:

Ծնողական խորհրդի նախագահ՝ /Մ.Գալստյան/

Քարտուղար՝ /Լ.Ավդալյան/

# Արձանագրություն 5

2022 թ. դեկտեմբերի 16-ին հրավիրվեց <<Կրթություն ԿՈՌՈՒ>>ՍՊԸ դպրոցի աշակերտական խորհրդի հերթական նիստը:

Նիստին մասնակցեցին աշակերտական խորհրդի բոլոր անդամները (թվով 11), դպրոցի տնօրեն Նարինե Մալախյանը ու Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Աննա Աղանյանը:

Օրակարգում՝

7. Սովորողների կարգապահության և դասերին հաճախելու մասին:

8. Ծանոթացում ներքին կարգապահական կանոնների, սովորողների իրավունքների և պարտականությունների:

9. Տնօրենության ներկայացվող առաջարկությունների մասին:

10. Սովորողների կարգապահության և դասերին հաճախելու մասին:

**Լսեցին:** <<Կրթություն ԿՈՌՈՒ>>ՍՊԸ դպրոցի ԴԱԿ Աննա Աղանյանը խոսեց այն մասին, որ առավելագույնս պետք է կանխել անհարկի բացակայություններն ու ուշացումները: Առաջարկեց դասարանների ղեկավարների և դասարանական ծնողական կոմիտեների հետ համատեղ փորձել հնարավորինս վերացնել ուշացումներն ու անհարկի բացակաները:

**Որոշեցին:** Ամանորյա հանդեսների վերաբերյալ աշակերտական խորհրդին ներգրավել կազմակերպչական աշխատանքներում,դիմել դասարանների ղեկավարներին և միասին լուծել ուշացումների և անհարկի բացակայությունների հարցը:

11. Ծանոթացում ներքին կարգապահական կանոնների, սովորողների իրավունքների և պարտականությունների:

**Լսեցին:** դպրոցի ԴԱԿ Աննա Աղանյանը Ամանորյա հանդեսների կազմակերպչական աշխատանքներում ներգրավածության վերաբերյալ կարդաց որոշակի պարտականություններ, <<Կրթություն ԿՈՌՈՒ>> ՍՊԸ դպրոցի ներքին կարգապահական

կանոններ, բացատրեց աշակերտներին նրանց իրավունքներն ու պարտականությունները: Ասաց, որ սովորողներից յուրաքանչյուրը իրավունք ունի որակյալ կրթություն ստանալու, անվճար օգտվելու դպրոցի ուսումնամանկավարժական ողջ բազայից, իրավունք ունի պաշտպանել իր ֆիզիկական և հոգեբանական առողջությունը ցանկացած տեսակի բռնությունից, սակայն հավելեց, որ աշակերտ պարտավոր է դասերին ներկայանալ հավուր պատշաճի՝ առանց ուշացումների, պահպանելով սանիտարահիգիենիկ կանոնները, դասագրքերով և տետրերով, լինել բարեկիրթ և հարգալից: նաև ասաց զմեռային ամիսներին դասերի ընթացքում կազմակերպել այցեր մշակութային համալիրներ:

**Որոշեցին:** Ներքին կարգապահական կանոնների կետերը ընդունել ի գիտություն և կետերից ցանկացածի կոպիտ խախտման դեպքում հարցը դնել քննարկման:

12. Տնօրենությանը ներկայացվող առաջարկությունների մասին:

**Լսեցին:** Աշակերտական խորհրդի նախագահ Էմմա Գալստյանն առաջարկեց մեկ անգամ ևս քննարկել Հաստատության ներքին կարգապահական կանոնների կետերը և անել առաջարկներ կանոնները համալսրելու և թարմացնելու համար:

Առաջարկեց սովորողների ժամանցի ապահովման համար ներկայացնել դպրոցում երեժշտական խմբերի բացում: Արձակուրդների ընթացքում առավել հաճախակի այցելություններ կատարվեն մշակութային կենտրոններ:

Գիտելիքի յուրացման որակի բարձրացման համար առաջարկեց բարձր առաջադիմություն ունեցող աշակերտներին դասերից հետո օգնել իրենց տարիքային խմբի ավելի ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներին օգնել նյութը յուրացնելու հարցում: Նշեց, որ բացի գիտելիքի յուրացումից աշխատանքի այս ձևը կնպաստի նաև միջանձնային հարաբերությունների բարելավմանն ու առավել շատ ընկերներ ձեռք բերելուն:

**Որոշեցին:** Աշակերտական խորհրդի նախագահի առաջարկները ներկայացնել տնօրենությանը:

Աշակերտական խորհրդի նախագահ՝ /Է.Գալստյան/

Քարտուղար՝ / Մ. Աթայան/